ՀՈՒՇԱԳԻՐ

Համագործակցության մասին

Ք. Երևան «25» նոյեմբեր 2019թ.

«Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Բաբկեն Պիպոյանի (Այսուհետ Կողմ 1 կամ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Կարեն Զաղոյանի (Այսուհետ Կողմ 2 կամ Ասոցիացիա), որը գործում է ասոցիացիայի կանոնադրության հիման վրա (Այսուհետ միասին Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին:

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակում Կողմերը համագործակցում են ՀՀ-ում սպառողների իրավունքների և պաշտպանության ոլորտում տեղեկատվության փոխանակման, դիմում բողոքներին միասնական սպառողակենտրոն մոտեցումներ դրսևորելու ուղղություններով:

2.2. Հուշագրի շրջանակում նախատեսվում է ապահովվել գործընթացների թափանցիկությունն ու համակողմանի վերահսկելիությունը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում, բացառությամբ հուշագրի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Կողմերն առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրի 2-րդ մասով սահմանված կոնկրետ ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են

իրականացնել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի գրավոր համաձայնագրերով՝ կախված այս կամ այն Կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությունից:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության 3 հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2. Սույն հուշագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1	Կողմ 2
«Իրազեկ և պաշտպանված սպառող»ՀԿ	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
Հասցե՝ 0041, ք. Երևան, Արցախի 30, 4-րդ հարկ, 401 սենյակ	Հասցե՝ 0010, ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2
Հեռ.՝ +37410 430 930	Հեռ.՝ +374 10 540199
Նախագահ՝ Բաբկեն Պիպոյան	Նախագահ՝ Կարեն Զաղոյան